ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՈՒՀԵՐԻ ՌԵԿՏՈՐՆԵՐԻ ՀԵՏ

Վրաստանի գիտության եւ կրթության նախարար Ալեքսանդր Ջեջելավան հանդիպում ունեցավ երկրի բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորների հետ:

Ինչպես նշեց նախարարը, նման հանդիպումներ ամեն ամիս կանցկացվեն համալսարաններում եւ այս կամ այն հարցով բոլոր որոշումները կընդունվեն միայն դիրքերի ու կարծիքների համաձայնեցման հիման վրա:

Հարցուպատասխանի կարգով անցկացված հանդիպմանը սահմանվեցին հաջորդ հանդիպման հարցերը: Հանդիպմանը կողմերը քննարկեցին նաեւ բուհերի ֆինանսավորման անվճար ֆակուլտետների, կրթության ինստիտուցիոնալիզացման, որակավորման բարձրացման, ծրագրերի փոխանակման, արդի տեխնոլոգիաների ներդրման եւ այլ հարցեր:

ՎԱՐԺԱՆՔՆԵՐ ՈՉ ՎՐԱՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մանկավարժների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնը սկսել է ոչ վրացական դպրոցներում դասավանդող ուսուցիչների առարկայական վարժանքները:

Առաջին փուլում վարժանքներ են անցկացվելու Քվեմո Քարթլիում աշխատող քիմիայի, ֆիզիկայի եւ պատմության ուսուցիչների համար: Դասախոսությունները նրանց կներկայացվեն մայրենի լեզվով: Այդ նպատակով կենտրոնը մի քանի ամիս առաջ, մրցույթի հիման վրա, առանձնացրեց հայ, ադրբեջանցի եւ ռուս մարզիչների: Բացի այդ, վերոնշյալ երեք լեզուներով մշակվել ու թարգմանվել են հատուկ վարժանք-մոդուլներ:

Ներկա փուլում վարժանքին կմասնակցեն շուրջ 40 ուսուցիչներ:

ՆՈՐ ԴԱՍԱԳՐՔԵՐ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Վրաստանում սկսվել է նոր ուսումնական տարվա համար դասագրքերի տպագրման գործընթացը:

Վրաստանի գիտության եւ կրթության նախարարությունը, անմիջական գնման ձեւաչափով, պայմանագիր է ստորագրել «Ֆորմա» ՍՊԸ-ի հետ, որով նախատեսված է նոր դասագրքերի լույսընծայում, ընդհանուր առմամբ, 2,5 միլիոն լարիի արժողությամբ:

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՅՎՈՒՄ Է

ԻՆՉՈ՞Ւ Է ԲՈՒՀԵՐՈՒՄ 20 ՀԱԶԱՐ ՏԵՂ ԹԱՓՈՒՐ ՄՆԱՑԵԼ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Ալեքսանդր Ջեջելավան, Ամերիկյան առեւտրաարդյունաբերական պալատի ղեկավարների հետ հանդիպմանը, հայտարարեց օտարերկրյա ուսանողների համար Վրաստան մուտք գործելու ընթացակարգի դյուրացման մտադրության մասին:

Հանդիպմանը ներկա Թբիլիսիի Ազատ համալսարանի կանցլեր Կոկա Թոփուրիան հայտարարեց, որ նախարարի նախաձեռնությունը ողջունելի է: Նրա խոսքերով, Վրաստանը հնարավորություն ունի միայն օտարերկրացի ուսանողների ներգրավմամբ տարեկան ստանալու 200 միլիոն դոլար:

«Այսօր երկրի բուհերում 45 հազար տեղ կա, սակայն ուսանողների թիվը 25-26 հազարին չի գերազանցում: Արդյունքում՝ 20 հազար տեղ մնում է թափուր, այն դեպքում, երբ դա կարող էին զբաղեցնել օտարերկրյա ուսանողները: Միջին հաշվով յուրաքանչյուր ուսանող տարեկան ծախսում է մոտ 10 հազար դոլար»,- ասաց Կոկա Թոփուրիան եւ հավելեց, որ վերոնշյալ հարցի կարգավորումը կարող է հանգեցնել ինչպես բուհերի, այնպես էլ՝ ողջ երկրի եկամուտների ավելացմանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ

ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ՔՈ ՆՈՐ ԴԵՐԵՐԻՆ, ՍԵՐԳԵՅ

Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնին կից, 1994 թվականից գործող թատերական ստուդիան ճանապարհ է հարթել տաղանդավոր շատ երիտասարդների, ովքեր իրենց արժեքավոր ներդրումն են բերում Վրաստանի բեմարվեստին: Այսօր ուզում ենք ներկայացնել այդ դերասաններից մեկին:

***Թբիլիսիի պոլիտեխնիկ համալսարանի եւ նշյալ ստուդիայի շրջանավարտ Սերգեյ (Սերգո) Սաֆարյանը 30 տարեկան է, 30-ից 10-ը նվիրել է թատրոնին: Ստեղծագործական այդ հատվածում, որը, ըստ թատերարվեստի օրինաչափությունների, բեմարվեստի շեմն է միայն, երիտասարդ դերասանն աստիճանաբար, ներկայացումից ներկայացում կարողացավ նվաճել թբիլիսյան հանդիսատեսի համակրանքը: Ո՞ր դերն էր, որ հիշելի դարձրեց նրան.- Չախ-չախ թագավո՞րը, թե՞ Կիկոսը («Թումանյանի հեքիաթները»), խորամանկ ու կաշառակեր Զաբոզյա՞նը («Դիպլիպիտո»), բեմին եւ կյանքի ցանկացած հանգամանքներում անշնորհք Դերասա՞նը («Անտեսանելի գլխարկը»), մեծամիտ, սնամեջ ժուրդե՞նը («Խելապակաս ժուրդենը»), հրաշքի ռոմանտիկ փնտրումներում իրատես գործարար դարձած Կուֆիսե՞լը («Զառ»), օրինազանցին երբեք չպատժող, ամենաբարի տեսուչ Պորտերխաո՞ւսը («Փախիր կնոջիցդ»), թե՞ մանկան պես անմիջական, բարեսիրտ Լինյաեւը («Գայլեր եւ ոչխարներ»)... Այս իրարից խիստ տարբեր մարդկային բնավորությունները, ռեժիսորների վկայությամբ, Սերգեյը թրծել է ազնիվ տքնանքով: Նրա դերասանական փնտրտուքների մասին ահա թե ինչ է ասում թատրոնի ռեժիսոր Լեւոն Ուզունյանը.«Սերգեյն այսօր ապրում է ստեղծագործական որոնումների մի նոր փուլ: Մինչ այս նա լռելյայն ընդունում եւ կատարում էր դերին վերաբերող դիտողությունները, հիմա հետաքրքրվում է, թե ինչու պետք է ընտրվի ա'յդ եւ՝ ոչ մեկ ա'յլ տարբերակ... Նա արդեն ամենախիստ պահանջներն է ակնկալում մեզանից: Սա ստեղծագործական մոտեցում է, քայլ՝ դեպի պրոֆեսիոնալիզմ, եւ դա, իհարկե, ուրախալի է...»:**

Ինչպե՞ս է երիտասարդ դերասանն անցնում ստեղծագործական որոնումների հերթական փուլը,- այս եւ այլ հարցերի մասին է մեր հարցազրույցը Սերգեյի հետ:

- Սերգեյ, ինչո՞ւ որոշեցիք միաժամանակ սովորել Թբիլիսիի պետական պոլիտեխնիկ համալսարանում եւ թատերական ստուդիայում: Կրթական այդ երկու հաստատություններն իրար հակասող բեւեռներ են...

- Շատերի նման ես էլ դերասանության մասին երազեցի դպրոցից, բայց այն օրերին թատերականի ուսանող դառնալու համար մեծ գումարներ էին «պահանջվում»: Եվ քանի որ դա մեր ընտանեկան համեստ բյուջեի համար անհասանելի էր, ստիպված ընդունվեցի պոլիտեխնիկ, ուր մշտապես ինձ զգացի օտար... Բարեբախտաբար, երկրորդ կուրսում պատահաբար ծանոթացա Պ.Ադամյանի անվան պետհայդրամ թատրոնի ստուդիայի ուսանող Աշոտ Սիմոնյանի հետ, նրա խրախուսանքից քաջալերված՝ հանձնեցի ու ընդունվեցի ստուդիա, այդ պահից կյանքն ինձ համար երջանկության աղբյուր դարձավ... 2007-ին միաժամանակ ավարտեցի թե' պոլիտեխնիկը, թե' ստուդիան:

- Եվ ահա, ռուսական կրթությամբ դպրոց եւ բուհ ավարտած, ռուսալեզու երիտասարդդ հայտնվեցիք հայկական կրթօջախում, ուր դառնալու էիք հայ թատրոնի դերասան: Դժվար չէ՞ր...

- Դժվար էր եւ իմ առաջնահերթ խնդիրը ստուդիայում դարձավ մայրենի լեզվի ուսումնասիրությունը: Մեր ընտանեկան լեզուն հայերենն է, բայց դա այն հայերենը չէ, որ ես կուզենայի իմանալ: Հաճույքով էի զբաղվում այդ խնդրով, ինչը, ի դեպ, ինձ տալիս էր գիտելիքներ նաեւ ժողովրդի պատմության ու ազգային մտածողության մասին: Ի՞նչ է նշանակում տվյալ բառը, ո՞րն է արմատը, քանի՞ իմաստ ունի... այս եւ նման հարցերով մինչ օրս հանգստություն չեմ տալիս ավագ կոլեգաներիս:

Ընդհանրապես ասեմ, որ ես եզակի օրինակը չեմ այդ առումով, եւ թատրոնի ղեկավարությունը մեծ աշխատանք է տանում՝ ստուդիայում ռուսալեզու ուսանողությանը հայերեն սովորեցնելու ուղղությամբ:

- Մենք գիտենք, որ Դուք զբաղված եք եղել Թբիլիսիի «Թավիսուփալի թեատրի» թատրոնի ռեժիսոր Նիկա Չիկվաիձեի «ՆաՁՁրեը, ՁՁՁրեը, ՁՁրոՁեը», Նոդար Դումբաձեի անվան պատանեկան թատրոնում՝ Վախթանգ Անդիաշվիլու «Պենտերաֆոբիա» եւ ռուսական Գրիբոյեդովի թատրոնում Պ.Ադամյանի անվան պետհայդրամ թատրոնի ռեժիսոր Լ.Ուզունյանի բեմադրած Օսիպ Մանդելշտամին նվիրված «Мне Тифлис горбатый сниться» ներկայացումներում: Ձեզ համար ի՞նչ է նշանակում խաղալ վրացական, ռուսական բեմերին:

- Նշված ներկայացումներում՝ Բադուրիի, Տուտուի, Ուրիշի (կերպարի անունը՝ Ուրիշը) դերերը ինձ տվեցին աշխատանքային մեծ փորձ, անսպասելի բեմական հայտնագործումներ:

- Ձեզ հաճախ ենք տեսնում Լեւոն Ուզունյանի բեմադրություններում, ընդհանրապես ռեժիսորի հետ աշխատանքը Ձեզ համար սովորական ստեղծագործական համագործակցությո՞ւն է, թե՞ ռեժիսորի «քմահաճույքների կատարում:

- Լեւոն Ուզունյանի բեմադրություններում իմ ներկայությունը կատարվում է իրե'ն ընտրությամբ: Ընդհանրապես, որեւէ ռեժիսորի եւ կոնկրետ Ուզունյանի հետ մեր համատեղ աշխատանքը միշտ արդյունավետ է լինում եւ՝ ուսանելի: Աշխատանքային այդ համատեղ պրոցեսը ինձ համար, միանշանակ, մեծագույն բավականություն է:

- «Ես այդ դերը ավելի լավ կխաղայի»,- նման միտք երբեւիցե ծնվե՞լ է Ձեզանում՝ ուրիշի խաղը դիտելիս:

- Այդ միտքը, երեւի թե, խոսում է ցանկացած դերասանի մեջ, թեկուզ այն պատճառով, որ նա ներկայացումը դիտում է ոչ սովորական հանդիսատեսի, այլ դերասանի աչքերով... Ի դեպ, ինձ համար շատ կարեւոր է, որ իմ խաղը դիտի դերասանը, որի աչքից չեն վրիպի խաղի նրբերանգները, դերի մատուցումը, հանդիսատեսի արձագանքն ու ընկալումը... Նրա սուբյեկտիվ կարծիքը, այս պարագայում, փորձի փոխանակում է:

- Ձեր կարծիքով, ո՞րն է դերասանի նպատակը:

- Ավելի բարի դարձնել հանդիսատեսին, մաքրել նրան...

- Կա՞ դերասան, ով օրինակելի է Ձեզ համար եւ ում կուզենայիք նմանվել:

- Դեռ դպրոցական տարիներից տարված եմ եղել վրաց ճանաչված արտիստ Ռամազ Չխիկվաձեի դերասանական կերպարով: Նրա Լիր արքան ինձ համար հանճարեղ մարմնավորում է եւ, իմ կարծիքով, բոլոր ժամանակների դերասանների համար՝ ուսանելի կերպարանավորում: Իսկ նմանվել որեւէ դերասանի, կարծում եմ, սխալ եւ անհեռանկար մոտեցում է:

- Արհեստավարժ, կայացած դերասանի Ձեր չափորոշիչները:

- Ինձ թվում է՝ դերասանի կայացած լինելը հանդիսատեսի գնահատականն է, որի արտահայտությունը նրա սերն է դերասանի հանդեպ: Իսկ իրեն՝ դերասանի համար, կայացման գործընթացը շարունակական ու մշտատեւ պրոցես է: Ամեն նո'ր դեր, երեւի թե, մի նո'ր հայտնագործություն է կայացման ճանապարհին:

- Դուք խաղացել եք նաեւ Գյումրիի թատրոնում...

- Ամենալավ հիշողություններն են կապված Գյումրիի՝ Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի եւ գյումրեցիների հետ: Այդտեղ ես խաղացել եմ Մալխասուլիի դերը՝ թատրոնի բեմադրիչ Նիկոլայ Ծատուրյանի «Այ քեզ խաթաբալա» պիեսում: Իմիջայլոց, այդ ներկայացումն արժանացավ «Տարվա լավագույն նախագիծ» մրցանակին:

Այդ ընթացքում ընդգրկվեցի նաեւ նույն թատրոնի ռեժիսոր Լյուդվիգ Հարությունյանի «Գամարջոբա, մամա» բեմադրությունում՝ Ֆրենկ Հարդերի դերով: Հետաքրքիր թատերական կոլեկտիվ է, հետաքրքիր ռեժիսորներ: Հաճույքով էի ընկալում գյումրեցիների համուհոտով սրախոսությունները, հումորը:

- Ձեր ո՞ր հատկանիշից կուզենայիք ազատվել:

- Երբեմն ես շատ տրտմել գիտեմ, ներքաշվել, դարդոտվել: Կուզենայի, Նարեկացու ասածի պես, իրար հետ հաշտ լինեին սիրտս ու միտքս...

- Այժմ որեւէ դերում զբաղվա՞ծ եք:

- Այո, Նոդար Դումբաձեի «Մեղադրական եզրակացություն» վեպի հիմքով ստեղծված համանուն ներկայացման մեջ՝ Շոշիայի դերում, որը բեմադրել է թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը:

- Սպասում ենք Ձեր նոր դերերին: Հաջողություն Ձեզ՝ բեմական եւ անձնական կյանքում:

Զրուցեց
ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆԸ

Ð²ðò – ä²î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

²èàÔæ²ä²ÐàôÂÚàôÜ

ՑԵՐԵԿԱՅԻՆ ՔՈՒՆԸ ՎՆԱՍԱԿԱՐ Է

Ցերեկը, ուղեղուց հետո, քնելու սովորություն ունեմ, թեպետ մերյավորներս դա սխալ են համարում: Հետաքրքիր է՝ ինչ են ասում այդ մասին մասնագետները:

Մ.Իգիթյան

Մառնեուլի

Ճաշից հետո մի երկու ժամ ննջելու հնարավորությունը կարող է մեծապես վնասել մարդու առողջությանը: Այս եզրակացությանն են եկել ԱՄՆ-ի Մինեսոտայի նահանգի Մեյո կլինիկայի հետազոտողները: Ուսումնասիրողներն իրենց աշխատանքի արդյունքները ներկայացրել են հիպերտոնիայի ուսումնասիրման ամերիկյան ընկերության տարեկան խորհրդաժողովում:

Մասնագետները պարզել են, որ ցերեկը քնող մարդիկ արյան բարձր ճնշումից 13-19 տոկոսով ավելի հաճախ են տառապում, քան նրանք, ովքեր արթուն են մնում մինչեւ գիշեր:

Արյան բարձր ճնշումը վտանգավոր է նրանով, որ կարող է հանգեցնել սրտի տագնապի եւ ինսուլտի:

¶Æî²Î²Ü

ԳՈՐԾԱՐԿՎԵԼ Է ՄԵՌԱԾ ՈՒՂԵՂԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Այսօրվա դրությամբ, մարդկային օրգանների պատվաստումը, փոխարինումը եւ այլն, սովորական երեւույթ է եւ ոչ մեկին չի զարմացնում: Հետաքրքիր է, հնարավո՞ր է, արդյոք, նույնը ասել մարդկային ամենազգայուն օրգանի՝ ուղեղի մասին:

Տ.Մինասյան

Թբիլիսի

Ուղեղի պատվաստման մասին դեռ ոչինչ ասել հնարավոր չէ, սակայն ներկայումս քայլեր են արվում մեռած ուղեղի վերականգնման համար: Այսպես, երկու կենսատեխնոլոգիական ընկերություններ՝ ԱՄՆ-ի Bioquark Inc.-ը եւ Հնդկաստանի Revita Life Sciences-ը, երկու երկրների իշխանություններից թույլտվություն են ստացել այն մարդկանց ուղեղի վերականգնման հնարավորությունների հետազոտման համար, որոնք մահացած են ճանաչված:

Դրա համար կընտրվի ուղեղի մահվան ախտորոշմամբ 20 մարդ, որոնց օրգանիզմի կենսագործունեությունը պահպանվում է արհեստականորեն:

Բուժընթացի ավարտից հետո՝ հիվանդները կշարունակեն մի քանի ամիս գտնվել հսկողության տակ:

Ինչպես Մեծ Բրիտանիայի մամուլին տրված հարցազրույցի ժամանակ ասել է Bioquark Inc.-ի գործադիր տնօրեն պրոֆեսոր Այրա Փաստորը, սա առաջին նման ձեռնարկումն է եւ հաջորդ աստիճանն այն բանի ընբռնման հարցում, թե ինչն ենք մենք մահ համարում:

Նա հավելել է նաեւ, որ առաջին արդյունքները կստացվեն երկու-երեք ամսվա ընթացքում:

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ 6,5 ՄԻԼԻՈՆ ՄԱՐԴՈՒ ՄԱՀՎԱՆ ՊԱՏՃԱՌԸ ԱՂՏՈՏՎԱԾ ՕԴՆ Է

Տարեկան շուրջ 6,5 միլիոն մարդ է մահանում օդի աղտոտման հետեւանքների հետ կապված հիվանդություններից: Այս մասին ասված է էներգետիկայի միջազգային գործակալության (ԷՄԳ)՝ հունիսի 27-ին հրապարակված զեկույցում:

ԷՄԳ-ի տվյալներով, օդի աղտոտումը մարդու հիվանդությունների հիմնական պատճառներից մեկն է: Այս առնչությամբ տակավին 1973 թվականին ստեղծված գործակալությունը մտադիր է ընդլայնել իր առաքելությունը: «Կլիմայի փոփոխման հետ կապված հրատապ հիմնախնդիրները, ինչպես նաեւ նոր երկրների, այդ թվում՝ էներգիայի եւ օդի աղտոտման աղբյուրների հիմնական սպառողների թվում Չինաստանի եւ Հնդկաստանի հայտնվելը՝ պահանջում են ԷՄԳ-ի գործունեության ռազմավարության վերանայում»,- նշված է զեկույցում:

The New York Times թերթում հրապարակված հարցազրույցում ԷՄԳ-ի գործադիր տնօրեն Ֆաթիհ Բիրոլը հայտարարել է. «Մենք պետք է պատասխանենք այսօրվա մարտահրավերներին, դա նշանակում է, որ մենք պետք է ավելի սերտորեն աշխատենք էներգետիկայի եւ տնտեսության նոր զարգացող ճյուղերի հետ»: Նրա խոսքով, գործակալությունը մտադիր է ամենից առաջ ավելի ակտիվ հարաբերություններ հաստատել Չինաստանի հետ, ինչը պետք է՝ «վճռական նշանակություն ունենա արտանետումների կրճատման համաշխարհային ջանքերի հաջողության համար», հաղորդել է ՏԱՍՍ-ը:

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԻՆՉՊԵՍ ՉՍԽԱԼՎԵԼ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Օգտագործած ավտոմեքենա գնելիս

(Սկիզբը՝ նախորդ համարում)

ԻՆՉՊԵՍ ՍՏՈՒԳԵԼ ՄԵՔԵՆԱՆ՝ ԳՆՈՒՄԻՑ ԱՌԱՋ

Արտաքին զննումը սովորաբար սկսում են թափքից, քանզի դա ամենաթանկարժեքն է վերանորոգման տեսանկյունից: Պետք է ուշադիր զննել մեքենան, տեսնել՝ չկա՞ն արդյոք «սարդիկներ»՝ ներկի փոքրիկ ուռուցիկություններ, որոնց տակ թաքնվում է ժանգը: «Սարդիկները» հայտնվում են նախեւառաջ դռների ներսի մակերեւույթին՝ ներքեւի մասում: Եթե դրանք առաջացել են, ապա մեկ-երկու տարի անց, ստիպված կլինեք լուրջ գումարներ ծախսել ներկելու վրա: Եվ մի' հավատացեք վաճառողին, որը պնդում է, թե 8-10 տարեկան ցանկացած մեքենայի վրա «սարդիկներ» կան. դրանք ոչ բոլորի վրա են լինում:

Այնուհետեւ պետք է նայել, թե կա՞ն արդյոք սահուն անհարթություններ տանիքին, դռներին եւ կապոտին: Համակցվո՞ւմ են թափքի վրա հարեւան դետալների ռելիեֆային բաղկացուցիչները: Եթե ինչ-որ բան այնպես չէ, նշանակում է՝ մեքենան խոշոր ավտովթարի է ենթարկվել եւ ավելի լավ է՝ հրաժարվել դրանից:

Այնուհետ մեքենան պետք է դնել ամբարձիչի վրա՝ փոս ընկած տեղերն ու ժանգը ներքեւից զննելու համար: Չեռքի հետ կարելի է նաեւ նայել, թե կա՞ն արդյոք որեւէ տեղ արտահոսքի (յուղի, բենզինի) հետքեր:

ՆՍՏՈՒՄ ԵՆՔ ՂԵԿԻՆ

Հիմա նստեք մեքենան եւ առանց շտապելու ստուգեք էլեկտրոնային բոլոր համակարգերը. ապակու խոզանակներն ու ջրացայտիչները, լուսարձակները, արգելակման ազդանշանները, սալոնի ջեռուցումը, կենտրոնական փականը եւ այլն: Այդ մանրունքներից յուրաքանչյուրի վերանորոգումը կարող է բավական թանկ նստել ձեզ վրա:

Այնուհետ պետք է մոտ 15 րոպե վարել մեքենան, բնականաբար, ղեկին նստած: Եթե վաճառողը թույլ չի տալիս ձեզ անձամբ վարել, ապա նրա հետ խոսելու բան այլեւս չունեք:

Մեքենան պետք է հեշտությամբ գործի ընկնի եւ հեշտությամբ պոկվի տեղից: Այն պիտի ճշտորոշ, առանց ուշացման հնազանդվի ղեկին: Իսկ բաց թողած ղեկով՝ շարժվի միայն ուղիղ: Փորձեք բաց թողնել ղեկն ու արգելակել. մեքենան չպետք է շեղվի կողքի: Պիտի արգելակի կտրուկ եւ բոլոր անիվներով՝ միաժամանակ:

Բնականաբար, շարժիչը պետք է աշխատի համաչափ եւ առանց կողմնակի աղմուկների:

Մաղթում ենք ձեզ օգտագործված մեքենայի հաջող գնում:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍԱՆԵԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մի մարդ, իմաստունին դիմելով, ասում է. «Ես այնքա՜ն խնդիրներ ունեմ, իմ կյանքը շատ ծանր է: Անընդհատ հոսանքին հակառակ եմ լողում ու արդեն ուժասպառ եմ եղել: Ի՜նչ անեմ»: Իմաստունը, պատասխանելու փոխարեն, կրակին երեք միանման թաս է դնում: Առաջինի մեջ գազար է գցում, երկրորդի մեջ՝ ձու, երրորդի մեջ՝ սուրճ: Քիչ անց նա հանում է գազարն ու ձուն եւ գավաթի մեջ լցնում սուրճը: «Ի՜նչն է փոխվել»,- հարցնում է իմաստունը մարդուն: «Ձուն ու գազարը խաշվել են, իսկ սուրճի հատիկները լուծվել են ջրում»,- պատասխանում է մարդը: «Ո'չ, ասում է իմաստունը,- դա այդպես է թվում՝ իրերին մակերեսորեն նայելիս: Տե'ս, պինդ գազարը եռացրած ջրում մնալով, փափկել է, իսկ փխրուն ու ջրիկ ձուն՝ պնդացել: Արտաքուստ դրանք չեն փոխվել, պարզապես հայտնվելով նույն անբարենպաստ միջավայրում, իրենց կառուցվածքն են փոխել: Նույնը մարդկանց հետ է կատարվում: Արտաքուստ ուժեղ թվացողը կարող է փափկել ու թուլանալ այնտեղ, որտեղ փխրունն ու նուրբը կարող է ամրանալ»: «Իսկ սո՞ւրճը»,- հարցնում է մարդը: «Այ հենց դա ամենահետաքրքիրն է,- պատասխանում է իմաստունը: Սուրճի հատիկները լուծվել են իրենց համար նոր, թշնամական միջավայրում եւ, փոխելով այն, վերածվել անուշաբույր ըմպելիքի: Կան առանձնահատուկ մարդիկ, որոնք, հանգամանքների բերումով, չեն փոխվում: Նրանք հենց այդ հանգամանքներն են փոխում՝ դրանց նոր եւ գեղեցիկ երանգ հաղորդելով, իրավիճակից օգուտ եւ գիտելիք քաղելով»:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ

Ամբողջ մարմնի կենդանությունը հոգին է, իսկ մարմինն ու հոգին կառավարողը միտքն է:

ԵՂԻՇԵ
V դար
Հայ պատմիչ

Լավն անողին լավն էլ վերջում կընկնի բաժին:

ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ
(1172-1216)
Վրաց հասարակական գործիչ, բանաստեղծ

Առողջանալու պայմաններից մեկը առողջանալ ցանկանալն է:

ՀԻՊՈԿՐԱՏ
(մ.թ.ա.460-մ.թ.ա.377)
Անտիկ հին հույն բժիշկ, փիլիսոփա

Բավական չէ իմաստություն ունենալ, հարկավոր է կարողանալ օգտվել դրանից:

ՑԻՑԵՐՈՆ
(մ.թ.ա.106-մ.թ.ա.43)
Հին հռոմեական քաղաքական գործիչ, փիլիսոփա

Բոլոր մարդիկ ի ծնե միանման են. ավելի անվանի է նա, ով ի բնե ազնիվ է:

ԳԻ ԴԵ ՄՈՊԱՍԱՆ
(1850-1893)
Ֆրանսիացի գրող

Դու պետք է տեսնես տարբերությունն ա'յն մարդկանց, ովքեր քեզ հետ խոսում են, երբ ազատ ժամանակ ունեն, եւ նրա'նց, ովքեր ժամանակ են ազատում՝ քեզ հետ խոսելու համար:

Ա.ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
«Վրաստանի» ընթերցող

²Ü°Î¸à†Ü°ð

☺ Եվան Ադամին հարցնում է.

- Ադամ, դու ինձ սիրո՞ւմ ես:

Ադամը պատասխանում է.

- Դա, բա էլ ում սիրեմ:

☺ - Ամուսինը կնոջը կանչում է պատշգամբ, ցույց է տալիս դեպի աստղերն ու ասում. «Ուզո՞ւմ ես էսօր գնամ քեզ համար ա՛յ էն աստղը բերեմ»: Կինը. «Ոչ մի աստղ, մինչեւ 10-ը տանը լինես»:

☺ - Առավոտյան կինը արթնացնում է ամուսնուն. «Սիրելիս, արթնացիր, արեւս, վեր կաց, իմ քաղցր ամուսին, արթնացիր: Սիրելիս, մաս-մաս չէ, դու լրիվ արթնացիր»:

☺ - Չոքանչը գալիս է աղջկան ու փեսային հյուր, փեսան դուռը բացում է. «Չոքանչ մայրի՞կ, էս երկա՞ր ես մնալու»: «Մինչեւ չզզվացնեմ»: Փեսան. «Փաստորեն, մի հատ կոֆե էլ չես հասցնի խմե՞լ»:

☺ - Ամուսինը հայելու առջեւ իրեն կարգի է բերում: Կինը հարցնում է.

- Ո՞ւր ես գնում: - Չիարշավի: - Դե արագացրու, թե չէ ձիդ արդեն երկու անգամ զանգել է...

☺ - Մա'մ, բոլոր հեքիաթնե՞րն են սկսվում «Լինում է, չի լինում» բառերով:

- Ո'չ, երբեմն սկսվում են նաեւ. «Սիրելիս, ես աշխատանքի վայրում մի քիչ գործ ունեմ, կուշանամ»:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԵՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Սերժ Սարգսյանը եւ Վլադիմիր Պուտինը քննարկեցին ԼՂ-ի հիմնախնդրի կարգավորման գործընթացի ներկա փուլին, առկա խնդիրներին եւ այդ գործընթացն առաջ մղելու հնարավորություններին վերաբերող հարցեր, մտքեր փոխանակեցին միջազգային եւ տարածաշրջանային արդի խնդիրների ու մարտահրավերների շուրջ:

Հանդիպմանը ներկա էին նաեւ երկու երկրների պաշտոնական պատվիրակությունների ներկայացուցիչները:

Հանդիպման ավարտին Սերժ Սարգսյանը եւ Վլադիմիր Պուտինը ՁԼՄ-ների առջեւ հանդես եկան բանակցությունների արդյունքներն ամփոփող հայտարարություններով:

ՍՏԵՂԾՎՈՒՄ Է ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագիր է ստորագրել՝ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի լուծարման մասին:

Հրամանագրով նախագահի աշխատակազմի ղեկավարին եւ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարին հանձնարարվել է, մինչեւ սեպտեմբերի 1-ը, երկրի ղեկավարի հաստատմանը ներկայացնել Ազգային անվտանգության քարտուղարության նորաստեղծ կառույցի կանոնադրությունը եւ իրավական մյուս փաստաթղթերը:

Կառավարությունը Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի հետ միասին անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել՝ Ազգային անվտանգության լուծարված աշխատակազմի կրճատված աշխատակիցների սոցիալական երաշխիքների ապահովման ուղղությամբ:

Հրամանագիրն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակումից տասը օրվա ընթացքում: Վերոնշյալ որոշումն ընդունվել է Ազգային անվտանգության խորհրդի դերի բարձրացման նպատակով, արդի ներքին եւ արտաքին մարտահրավերների հարցով օպերատիվ, արդյունավետ եւ համակարգված արձագանքման համար:

Բացի այդ, ինչպես նշված է փաստաթղթում, բարեփոխված սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո, Ազգային անվտանգության խորհուրդը կստանա սահմանադրական մարմնի նոր կարգավիճակ: Իրականացվելիք քայլերը կոչված են՝ խորհրդատվական մարմինը որոշում ընդունող մարմնի տրանսֆորմացման ապահովմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորած կառավարական պատվիրակությունն աշխատանքային այցով գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում. Հայաստանի կառավարության ղեկավարն օգոստոսի 12-ին Սոչիում մասնակցեց Եվրասիական միջկառավարական խորհրդի հերթական նիստին:

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների կառավարությունների ղեկավարները ոչ պաշտոնական հանդիպմանը քննարկել են համաշխարհային տնտեսության, ԵԱՏՄ-ի երկրների տնտեսությունների վիճակը, ինտեգրացիոն փոխգործակցության բարելավման հարցերը եւ առաջիկա նիստի օրակարգը:

Հանդիպմանը մասնակցեցին ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեւը, Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի կառավարությունների ղեկավարներ Անդրեյ Կոբյակովը, Քարիմ Մասիմովը, Սոորոնբայ Ժեենբեկովը, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանը:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ 7-ՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲԱՆԱՁԵՎ

Համահայկական կրթական 7-րդ խորհրդաժողովի արդյունքների հիման վրա ընդունվել է բանաձեւ, որն ուղղորդիչ է դառնալու Հայաստանի կրթության եւ գիտության նախարարության համար՝ մոտակա երկու տարիների ընթացքում:

Համաձայն բանաձեւի՝ խորհրդաժողովին բարձրացված հիմնախնդիրների լուծման նպատակով ներկայացվել են մի շարք առաջարկություններ, մասնավորապես, մշակել Սփյուռքի ուսուցիչների հավաստագրման, մանկավարժական գործունեության մշտադիտարկման, ատեստավորման մեխանիզմներ, շարունակել Սփյուռքի մանկավարժների ամենամյա վերապատրաստումը Հայաստանում եւ համայնքներում (ինչպես առկա, այնպես էլ հեռավար)՝ արդիականացնելով դասընթացների ծրագրերը, բովանդակությունն ու կազմակերպման ձեւերը: Բացի այդ, համաձայն բանաձեւի՝ առաջարկվել է Սփյուռքի մեկօրյա ուսումնական հաստատությունների շրջանավարտների համար մշակել հայագիտական առարկաների քննությունների կազմակերպման եղանակներ, ուսումնասիրություններ իրականացնել Սփյուռքի սովորողների եւ ուսուցիչների շրջանում եւ, դրանց արդյունքների հիման վրա, մշակել հոգեբանական աջակցության եւ վերականգնողական աշխատանքների ծրագիր:

ԱՌԱՆՑ ՎԻԶԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳ ԻՐԱՆԻ ԵՎ ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԵՏ

Հայաստանի եւ Իրանի կառավարությունների միջեւ 2016թ. հունիսի 5-ին ստորագրված՝ քաղաքացիների՝ առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին փոխըմբռնման հուշագիրը, ուժի մեջ է մտել:

Փոխըմբռնման հուշագրով Հայաստանի եւ Իրանի քաղաքացիները միմյանց տարածք մուտք գործելու, տարանցիկ անցնելու եւ գտնվելու համար ազատվում են մուտքի արտոնագիր ձեռք բերելու պահանջից՝ 90 (ինսուն) օր չգերազանցող ժամկետով՝ 180 (հարյուր ութսուն) օրվա ընթացքում:

Նման պայմանագիր կնքելու առաջարկությամբ հանդես է եկել նաեւ Ուզբեկստանը:

ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՑԻՆ ՀՈՒԼԻՍԻ 17-31-Ի ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Պարեկապահակային ծառայության գնդի վրա հարձակման հետեւանքով հուլիսի 17-31-ն ընկած ժամանակահատվածում տուժել է 74 ոստիկան: Հուլիսի 17-19-ը Երեւան քաղաքում բերման է ենթարկվել 119 մարդ: Այս մասին հայտնել են ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչությունից:

- Հուլիսի 19-31-ն ընկած ժամանակահատվածում բերման ենթարկված անձանց թիվը պարզվում է, ուստի այդ մասին կտեղեկացնենք մինչեւ օգոստոսի 15-ը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություն կազմվել է 9 քաղաքացու նկատմամբ: Քանի որ նախապատրաստված նյութերն ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտե, ապա հարուցված քրեական գործերի թիվը կարող է տրամադրել ՀՀ քննչական կոմիտեն: Հուլիսի 17-ից սկսած՝ ՀՀ ոստիկանությունում Մարդու իրավունքների պաշտպանից ստացվել է 20 դիմում, որոնց մեծ մասը դեռեւս քննարկման փուլում է, քանի որ դրանցում նշված փաստական տվյալների ստուգումը հնարավոր է կա'մ ծառայողական քննությամբ, կա'մ քննչական գործողությունների միջոցով:

Այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվություն ՀՀ ոստիկանությունը ներկա պահին չի տնօրինում, քանի որ դրանց պարզումը նախաքննության մարմնի իրավասությունում է,- ասված է պատասխանում:

ՕԳՈՍՏՈՍԻ 11-Ը՝ ՀԱՅՈՑ ՆԱՎԱՍԱՐԴ

Նավասարդը հայկական տոմարի առաջին, իսկ ամռան վերջին ամիսն է: Այն կազմված է «նավ» (նոր) եւ «սարդ» (տարի) արմատներից եւ նշանակում է «նոր տարի»: Նավասարդն ունեցել է 30 օր, սկսվել է օգոստոսի 11-ին եւ վերջացել սեպտեմբերի 9-ին: Հին Հայաստանում Նավասարդի 1-ին (օգոստոսի 11) սկսվում էին նոր տարվան նվիրված տոնախմբությունները ու խրախճանքները, որոնք տեւում էին մեկ շաբաթ:

Օգոստոսի 11-ով սկսված Հայկյան տոմարն էլ մեկնարկել է Հայկ Նահապետի՝ Բելի դեմ տարած հաղթանակով (Խոշաբի կամ Հայոց Ձորի ճակատամարտ), որը տեղի է ունեցել Ք.ա. 2492թ. Նավասարդի 1-ին (օգոստոսի 11):

18-րդ դարում, երբ հայերը սկսեցին կիրառել Գրիգորյան օրացույցը, այլեւս դադարեցին նշել այս բոլոր իրադարձությունները միավորող ազգային տոնը: Նավասարդը, ի տարբերություն հեթանոսական այլ տոների, ինչպիսիք են Վարդավառը եւ Ձատիկը, որոնք նշվում են որպես նոր եկեղեցական տոներ, այժմ կորցրել է իր նշանակությունը եւ մոռացության է մատնվել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԲՐԱԶԻԼԻԱՅՈՒՄ

Օգոստոսի 10-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով մեկնեց Բրազիլիա:

Այցի շրջանակներում Հայաստանի նախագահը հանդիպեց Ռիո դե Ժանեյրոյում 31-րդ ամառային օլիմպիական խաղերին մասնակցող Հայաստանի օլիմպիականներին:

Սերժ Սարգսյանը ներկա գտնվեց՝ մայրաքաղաք Բրազիլիայում Հայաստանի դեսպանության շենքի հիմնարկեքի արարողությանը, պաշտոնական հանդիպումներ ունեցավ Բրազիլիայի ղեկավարության հետ:

ԲԱՅՎԵԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՁԱՆԱԶԱՆՅԱՆԻ ԱՐՁԱՆԸ

Երեւանի «Բանանց» ֆուտբոլային ակումբի մարզաբազայում բացվեց «Արարատ 73»-ի լեգենդար ավագ Հովհաննես Ձանազանյանի արձանը:

Հուշակոթողի բացման արարողությանը ներկա էին Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանը, «Բանանց» ֆուտբոլային ակումբի սեփականատեր Ձեւան Չելոյանցը, Հովհաննես Ձանազանյանի թիմակիցներից Էդուարդ Մարկարովը, ընտանիքի անդամները եւ այլ հյուրեր: Հայկական ֆուտբոլի լեգենդներից մեկի արձանի հեղինակը քանդակագործ Միեր Մնացականյանն է:

ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՃԵԼ Է

Հայաստան, այս տարվա առաջին կիսամյակում, ժամանել է 501 հազար 118.4 զբոսաշրջիկ: Հայաստանի ազգային վիճակագրության ծառայության տվյալներով՝ 2015-ի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ այս ցուցանիշն աճել է 2.4 տոկոսով:

2016-ի հունվար-հունիսին, զբոսաշրջության նպատակով, Հայաստանից մեկնել է 470 հազար 693 մարդ: 2015-ի նույն ժամանակաշրջանի համեմատ՝ նշյալ ցուցանիշն աճել է 1.2 տոկոսով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՕԳՈՍՏՈՍ

13.08.2016. Տոն Շողակաթի՝ Սուրբ էջմիածնի, ըստ Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի:

14.08.2016. Վերափոխումն Սուրբ Աստվածածնի:

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին, մեծ շուքով ու հանդիսավորությամբ, նշում է Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը: Այն Հայ Եկեղեցու հինգ Տաղավար տոներից չորրորդն է եւ՝ Տիրամորը նվիրված տոներից ամենահինը:

ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՔՆՆԱՐԿՎԵՑ ԵՐԵՎԱՆԻ ՈՒ ԲԱԹՈՒՄԻԻ ՄԻՋԵՎ ՈՒՂԻՂ ԱՎԻԱՉՎԵՐԹԵՐԻ ՀԱՐՑԸ

ԻՍԿ ԹԲԻԼԻՍԻ-ԵՐԵՎԱՆ ԱՎԻԱՉՎԵՐԹԵՐԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ

Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության ղեկավար Զուրաբ Պատարիձեն եւ Բաթումիում Հայաստանի գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանը քննարկել են Երեւանի եւ Բաթումիի միջեւ ուղիղ ավիահաղորդակցության հաստատման անհրաժեշտությունը՝ զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են առեւտրատնտեսական համագործակցության եւ զբոսաշրջության զարգացման հարցերը: Գլխավոր հյուպատոսը համատեղ մշակութային միջոցառումներ անցկացնելու պատրաստակամություն է հայտնել:

- Աջարիայի եւ Հայաստանի միջեւ արդեն երկար տարիներ համագործակցություն է իրականացվում տարբեր ուղղություններով: Տարածաշրջանը գործընկերային հարաբերություններ ունի եղբայր-քաղաքների հետ, ինչն ապագայում պետք է է'լ ավելի ակտիվացվի,- հանդիպմանը հայտարարեց Զուրաբ Պատարաձեն:

Նշենք, որ ներկայումս շաբաթական երեք անգամ՝ հինգշաբթի, շաբաթ եւ կիրակի օրերին պարբերաբար ավիաչվերթեր են իրականացվում Թբիլիսի-Երեւան ուղերթով: Թբիլիսիից ինքնաթիռը մեկնման ժամը 21:25-ն է: Գինը՝ 225 լարի:

ՏԱՐԵՐՔ

ՏԱՐԵՐՔ՝ ԲՈՐԺՈՄԻՈՒՄ

Օգոստոսի 4-ին, հանգստավայրային Բորժոմի քաղաքում տեղացած ուժեղ կարկուտն ու հորդառատ անձրեւները լուրջ հիմնախնդիրներ առաջացրին: Իշխանություններն ստիպված էին ջրածածկի վտանգավոր վայրից, այսպես կոչված, ծծմբային բաղնիքների տարածքից, էվակուացնել տեղի բնակիչներին, իսկ զբոսայգուց՝ զբոսաշրջիկներին: Բորժոմիի մունիցիպալիտետի վարչության ղեկավար Դմիտրի Ղիփիանու խոսքերով, տարերքը լուրջ վնաս է հասցրել ազգային զբոսայգուն, արմատախիլ արել դարավոր ծառեր: Ծանր վիճակ է ստեղծվել Տբա եւ Սադգերի գյուղերում, որտեղ քամին տապալել է ծառեր, որոնք շրջափակել են ճանապարհը: Վնասվել են նաեւ տների ծածկերը:

ՌԻՈ - 2016

ԱՌԱՋԻՆ ՄԵԴԱԼՆԵՐԸ՝ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ ԱԿՏԻՎՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ՎԱՌԼԱՄ ԼԻՊԱՐՏԵԼԻԱՆԻ

Նշենք, որ Լաշա Շավդաթուաշվիլին, չորս տարի առաջ, Լոնդոնի Օլիմպիադայում, 66 կգ քաշային կարգում նվաճել էր չեմպիոնի կոչում:

Ինչ վերաբերում է Վրաստանի հավաքականի մյուս անդամներին, ապա, ցավոք, նրանք հանդես եկան իրենց հնարավորություններից ցածր եւ դուրս մնացին մեդալների համար պայքարից:

Անհաջողությունը ուղեկցում է նաեւ Հայաստանի օլիմպիական հավաքականին: Վնասվածքների եւ անհաջող ելույթների արդյունքում, օլիմպիական պատվանդանին տեղ զբաղեցնելու համար, պայքարից դուրս մնացին հայ ըմբշամարտիկների, ձյուդոյիստների, ծանրամարտիկների մեծ մասը:

Ինչ վերաբերում է 31-րդ ամառային օլիմպիական խաղերի 7-րդ մրցումային օրվան նախորդող մեդալային հաշվարկին, ապա՝ առաջին տեղը վստահորեն զբաղեցնում է ԱՄՆ հավաքականը:

ԱՄՆ-ի օլիմպիական ընտրանին, ընդհանուր առմամբ, նվաճել է 38 մեդալ, որոնցից՝ 16 ոսկե, 12 արծաթե եւ 10 բրոնզե: Մեդալային հաշվարկի 2-րդ տեղում Չինաստանն է՝ 11 ոսկե, 8 արծաթե եւ 11 բրոնզե մեդալով: Լավագույն եռյակը եզրափակում է Ճապոնիան՝ համապատասխանաբար՝ 7 ոսկե, 2 արծաթե եւ 13 բրոնզե մեդալով:

ԼԱՇԱ ՇԱՎԴԱԹՈՒԱՇՎԻԼԻ

Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցնում նաեւ Ավստրալիայի, Հարավային Կորեայի, Հունգարիայի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի եւ Իտալիայի հավաքականները:

ՖՈՒՏԲՈԼ

ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ 118-ՐԴՆ Է, ԻՍԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ 102-ՐԴԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների ընթացիկ տարվա օգոստոսի վարկանիշային աղյուսակը: Նախորդի համեմատությամբ՝ դրանում գրեթե փոփոխություններ չկան: Վրաստանի հավաքականը նոր աղյուսակում էլ զբաղեցնում է 118-րդ տեղը, իսկ Հայաստանի թիմը հանգրվանել է 102-րդ հորիզոնականում: Վարկանիշային աղյուսակը գլխավորում է Արգենտինայի հավաքականը: Երկրորդ եւ երրորդ տեղերը զբաղեցնում են Բելգիայի ու Կոլումբիայի թիմերը: Առաջին տասնյակում տեղ են զբաղեցնում նաեւ Գերմանիայի, Չիլիի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի, Բրազիլիայի ու Իտալիայի հավաքականները:

«ԴԻՆԱՄՈՆ» ԴՈՒՐՍ ՄՆԱՑ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ

Թբիլիսիի «Դինամոյի» ֆուտբոլիստները Եվրոպայի չեմպիոնների լիգայի երրորդ փուլից դուրս մնացին: Այդ փուլում դինամոյականները պատասխան խաղում հյուրընկալեցին Զագրեբի «Դինամոյին» եւ պարտություն կրեցին 0:1 հաշվով: Նշենք, որ այս թիմերի առաջին հանդիպումը Զագրեբում ավարտվեց տեղի «Դինամոյի» հաղթանակով՝ 2:0 հաշվով: Այսպիսով, Թբիլիսիի «Դինամոն» դուրս մնաց պատվավոր գավաթի խաղարկությունից:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԻՆ ԼԱՐՍԻՆ ԲՈԼՈՐ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ Է

Վրաստանի ՆԳՆ-ի արտակարգ իրավիճակների դեպարտամենտից ստացված տեղեկատվության համաձայն՝ օգոստոսի 10-ից Լարսի ավտոճանապարհը բացվել է, թեպետ գիշերային ժամերին, անվտանգության նկատառումներից ելնելով, այն փակվում է:

Ճանապարհը բաց է բոլոր տեսակի ավտոմեքենաների համար, սակայն, միաժամանակ, երկու կողմերից հանդիպակաց երթեւեկությունն արգելվում է, երթեւեկությունը պետք է իրականացվի առանց կանգառների, ինտենսիվ տեղումների դեպքում՝ արգելել տրանսպորտային միջոցների երթեւեկությունը:

Երթեւեկությունը նշված կարգով իրականացվում է պարեկային ոստիկանության անմիջական վերահսկման եւ կոորդինացման ներքո:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Ճամփա գնացող, ուղեւոր: 9.Առողջավայր՝ Արեւմտյան Վրաստանում: 10.Թռչնաղբ: 11.Նավահանգստային քաղաք՝ Հունաստանում: 13.Ակուր, բրիչ: 16.Հին գերմանական գիր: 17.Զգացմունք: 19.Նորից: 22.Անթույն օձ: 24.Ճապոնական թատրոն: 25.Հայ երիտասարդ ռեփեր: 27.Պերսոնաժ՝ «Կովկասի գերուհին» կինոնկարից: 29.Կարիք: 32.Նահանգ ԱՄՆ-ում: 33.Ազատազրկում: 35.Հանցանք: 38.Ամերիկացի գրող ... Լոնդոն: 40.Փոս: 41.Փոքրիկ տոպրակ՝ փող, ծխախոտ պահելու համար: 44.Շաղկապ: 46.Շորթել: 49.Ճամփա, շավիղ: 51.Անգործունյա, անտարբեր: 52.Ուժգին: 55.Ցույլ, անաշխատասեր: 56.Գետ՝ Ռուսաստանում: 57.Ֆիլմ: 58.Հարթ, ողորկ: 59.Գոյականի հոլով:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Գրական ընկերություն ... Քաթիպա: 2.Թմրամիջոց: 3.Թռչունների արքա: 4.Ելք ու ...: 5.«Ամենաքաղցը եւ ամենադառը»: 6.Թվանշան: 8.Ֆակուլտետի տնօրեն: 12.Թանգարան՝ Փարիզում: 14.Անամոթ, լաչառ: 15.Կոկորդի մուտքի գեղձ: 18.Քաղաք՝ Իտալիայում ... Լեչեզե: 19.Փասիանների ընտանիքի թռչուն: 20.Պետություն՝ Վեստ Ինդիայում: 21.Քուն, մրափ: 23.Տափակ փայտ: 26.Ծառի հովը (բրբ.): 28.Առաջակողմ: 29.Եղջյուր: 30.Նշանավոր կինոռեժիսոր եւ կինոդերասան ... Բեկնազարյան: 31.Ոչ ընդարձակ, սեղմ: 34.Ասք: 36.Գրական ստեղծագործություն: 37.Նոյի որդիներից: 39.Հնագույն բանաստեղծություն: 42.Բուժիչ հատկություններով օժտված թանկարժեք քար: 43.Կեսը մնացած, անավարտ: 45.Ուկրաինացի բասկետբոլիստուհի ... Մարկոտենկո: 47.Քաղաք Ֆրանսիայում: 48.Անմազ, քաչալ: 50.Շատ բարձր, վիթխարի: 53.Անասունի մորթուց պատրաստած պարկ: 54.Բուրգաձեւ պատկեր:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Կարմեն: 6.Պրադո: 9.Ազատ: 11.Պտույտ: 12.Կիվի: 13.Ալես: 15.Ում: 17.Ռե: 19.Ապակի: 21.Անրի: 22.Ամպեր: 24.Իկ: 25.Ան: 27.Վշտունի: 29.Ասք: 30.Նեսոն: 32.Միլան: 33.Լաոս: 36.Թյուր: 38.Սմ: 39.Իչ: 40.Կորով: 41.Փերի: 42.Ներիր: 43.Վավա: 48.Պան: 49.Ամա: 53.Ածական: 57.Լեյլա: 59.Փալան: 60.Իգրեկ: 61.Կռան: 62.Ուն: 63.Սայաթ: 64.Արման:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Արուս: 3.Մատաղ: 4.Եզ: 5.Նանե: 6.Պերու: 7.Դվինա: 8.Օպերա: 10.Կիլիկիա: 14.Սամսոն: 16.Մարշալ: 18.Ենիսեյ: 20.Կին: 23.Եվ: 25.Անի: 26.Նելսոն: 28.Ուգո: 31.Սամվել: 32.Մրոտված: 34.Արփի: 35.Սերիկ: 36.Թառ: 37.Ուկ: 39.Իլիա: 44.Ապարան: 45.Անափ: 46.Դալի: 47.Գորկի: 50.Մեգ: 51.Այրում: 52.ՄԱԿ: 54.Կարա: 55.Ալ: 56.Նառա: 58.Լենա:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445